

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 11/3

22 մարտի 2016 թ.

Քննարկվեց Ա/Ձ Ռուբեն Խաչիկյանի 17.02.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 22.12.2015թ-ի թիվ 274/7 որոշման դեմ:

Ա/Ձ Ռուբեն Խաչիկյանի գանգատում բերված փաստարկները.

25 դեկտեմբեր 2015թ. Ա/Ձ Ռուբեն Խաչիկյանը փոստային առաքմամբ ստացել է ՀՀ Ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության պետի 22 դեկտեմբերի 2015թ. թիվ 274/7 որոշումը «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» (այսուհետ՝ վարչական ակտ):

Ա/Ձ Ռուբեն Խաչիկյանը գտնում է, որ վարչական ակտը ոչ իրավաչափ է և այն ենթակա է առ ոչինչ ճանաչման հետևյալ պատճառաբանությամբ:

Վարչական ակտը հստակ և հասկանալի ձևակերպված չէ, քանի որ նկարագրական մասում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի համաձայն՝ չեն պահպանվել վարչական ակտին ներկայացվող պահանջները, այն է. «Վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում»: Նույն հոդվածի 4-րդ մասի ե) կետի համաձայն՝ վարչական ակտը պետք է պարունակի «ակտի ընդունման հիմնավորումը (պատճառաբանական մաս)», որը նույնպես ակտում բացակայում է: Նույն օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով՝ պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական հիմքերը, մինչդեռ դրանք բացակայում են:

Ելնելով վերոշարադրյալից՝ Ա/Ձ Ռուբեն Խաչիկյանը խնդրում է առ ոչինչ ճանաչել ՀՀ Ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության պետի 22 դեկտեմբերի 2015թ. թիվ 274/7 որոշումը «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» որոշումը:

ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Ա/Ձ Ռուբեն Խաչիկյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 21.12.2015թ-ի դրությամբ նրա եկամտահարկի գծով չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 76.080 դրամ, այդ թվում՝ հարկ 49.163 դրամ, տույժ 26.917 դրամ:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի

կողմից 22.12.2015թ-ին ընդունվել է թիվ 274/7 որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում) Ա/Ձ Ռուբեն Խաչիկյանից 76.080 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունն առաջացել է Ա/Ձ Ռուբեն Խաչիկյանի կողմից ներկայացված 2009թ-ի տարեկան եկամտահարկի հաշվարկում արտացոլված եկամտահարկի գումարը սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով: Ընդ որում, նշված գումարը մինչ օրս չի վճարվել:

Հանձնաժողովը գտնում է, որ Որոշմամբ եկամտահարկի գծով գանձման առաջադրված պարտավորությունը հիմնավոր է և Ա/Ձ Ռուբեն Խաչիկյանի կողմից ենթակա է կատարման, քանի որ այն հայտարարվել է իր իսկ կողմից ներկայացված 2009թ-ի տարեկան եկամտահարկի հաշվարկով:

Հարկ է նշել նաև, որ տվյալ դեպքում կիրառելի չէ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածով նախատեսված հարկային պարտավորություններ առաջադրելու վաղեմության ժամկետը, քանի որ պարտավորությունը ոչ թե նոր է հայտնաբերվել, այլ՝ այն հարկային մարմնին հայտնի է եղել և հաշվառվել է եկամտահարկի անձնական հաշվի քարտում 2009թ-ի տարեկան եկամտահարկի հաշվարկը ներկայացվելու իսկ օրվանից:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը գտնում է, որ Որոշումը կազմված է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն. «Գրավոր վարչական ակտին ներկայացվում են հետևյալ պահանջները.

ա) վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում.»:

Նույն օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը»:

Քննարկվող դեպքում Որոշման մեջ նշված է. «Պարտավորություններն առաջացել են 2009թ. ներկայացվա»: Այսինքն, Որոշումից որևէ կերպ չի կարելի տեղեկանալ դրանում արտացոլված պարտավորության առաջացման հիմքերի մասին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 22.12.2015թ-ի թիվ 274/7 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ